# ԷԼ ՄԻ՛ ԽՆԴՐԻՐ...

---

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՐՄԻԵԱՆԻ

---

Էլ մի՛ խնդրիր, մանո՛ւկ սիրուն,
Տանջված սրտից քեզ նվեր՝
Ո՛չ երգ այրող, երգ վառվռուն,
Ո՛չ սիրոյ մեղմ նվագներ։

Զո՛ւր են քո ջերմ, քո խանդալից
Այդ նոր ժրպիտն ու գգվանք.
Դու չես ցրվիլ իմ հեգ սրտից
Նենգված սիրոյ տառապանք...

Այն սև օրից, երբ փշրեցիր
Դու յոյսերիս ծաղկավառ...
Սէրն ու երգիս անարգեցիր—
Սիրտիս մեռաւ քեզ համար...

Այն օրից իմ մատաղ կրծքում
Շիջաւ չքնաղ քո պատկեր.
Այժմ վառված՝ իմ երգերում
Ես գգվում եմ մի այլ սէր՝

Սէր գէպի հոգս ու կարիքի
Բաղդահալած զաւակներ...

Այդ սէրն է ինձ այժմ, ո՛վ կոյս,
Ոգևորում, կեանք տալիս...
Նա է բուռը խանդը հոգոյս,
Այրող նիւթը երգերիս...

25 յունիսի, 1890 թ. Մոսկվա։